ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77
araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2025 թվականի N 1089-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետը և Ա/Ձ Լարիսա Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Լարիսա Հարությունյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում 2025 թվականի 4-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 27
Արաքս համայնք